178. ՍԱՏԱՆԱՆ ԵՎ ՉԱՐ ԿԻՆԸ

Ասում ա՝ մին դո̈նում մին չար կնեգյ մին սատանու նհետ մա̈րշ ա կյա̈մ, թա. «Հո՞ւ կկարե մըեծ չար պեներ փըռնե»։ Մա̈րշ ըն կյա̈մ, ո̈ւրո̈ւր անա ճոկվում, մինը դի̈պա ծա̈խ, մինը դիպա՝ աչ։

Սատանան կյա̈մ ա դիպա ճաղացը, վըեր հինչ ա ճղացումը չար պեներ փըռնե, կու քըցի։'

Էն վըեր ա չար կնեգյը՝ կյա̈մ ա, տեսնում մին քարտաշ մախարիրը ծեռքին քար ա տաշում։

— Պա՛րով, ուստա։

— Աստծու պարին։

— Ուստա՛, հումց վըեր տեսնում ըմ, շատ օրախ ըս։ Օղում ըմ սարախ գյիդամ։ Հի՞նչ կինի ասիս։

— Ըստուծանա թաքուն չի, քըզանա հինչ թաքուն ինի, ես մին լա̈վ կնեգյ օնիմ, նրա էշխավն ա համ լա̈վ ւդա̈ն ըմ անում. հա՛մ էլ օրախ ըմ։

— Էտ տու վըս ասում, մին տես ես էլ հավա՞ն ըմ, վըեր տեսնամ, ես կասիմ, փիսն ա, թա՝ լա̈վը։

— Իմ կնեգյը մին էն ջուռա օղլուշաղ ա, վըեր հա̈լա̈ ուրիշի իրեսը տեսալ չի։

— Չէ՛, ուստա, ես շատ ըմ խընթըում, վըեր մին նշա̈ն տաս, գյինամ ծեր տուն, մին քու կընգանտ տեսնամ։

Էս թա̈ննա̈հը տեսնում ա, վըեր էս կնդանան պըրծնում չկա, ջուբան հանում ա տերողորմիան, տալիս ա իրան, թա. «Կա, գյինա տես»։

Էս չար կինը ծեռքերը ներկոտ ա անում, կյամ բաննահի տունը։ Տունը թակում ա, կնեգյը մաչկյուսան հըրցնում ա. «Հու վա՞»։

Չար կինը խընթըվում ա տունը պաց անել, ամմա բաննահին կնեգյը պաց չի անում, ասում ա. «Մըեր տունը իմ մաըթանը օքիման օրիշի հետև պեց չըմ անել»։

Չար կնեգյը բըննահին տերողորմյան նշանց ա տամ, կնեգյը տունը պեց ա անում։ Չար կնեգյը յըրա յա ընկնում բըննահեն կնկանը պաչում. համ էլ ներկուտ ծեռքը իրեսը քսում։ Տեսանանան խուսելանը նստը, էս չար կնեգյը ետ ա տեռնում, կյամ բաննահեն կոշտը։

— Էն ա՞ քու թարիփլամա կնեգյը, քյնցե, տեսե ներկըրարեն դուցումը, օղում չար, թա տունն էլ պաց անե։

Բաննահը հըվատում ա չար կնկա ըսածներեն, եր ա կենում, եր ա օնում մուխարիբը, վազ տամ դիպա տուն։ Կնեգյը տունը պաց ա անում։ Բաննահը եշում ա տեսնում, վըեր կնգա թոշին ներկու տեղեր կան։ Էլ աղին ու բոզին էշում չի, մախարիբովը տամ ա կնգանը տեղն ու տեղը ըսպանում։

Հարայն ընգյնում ա շենը. էս կնկա ախպերտենքը հըվաքվում ըն, կյամ տամ ուրանց փըսեն ըսպանում, քվորը աջըղը հանում։ Մհենգյ էլ էս բըննահեն ախպերտենքն ըն կյամ, հընգեր. հըրևան լոխ մի մինը մին փադ եր կալած տուս ըն կյամ, կովու։ Շենը մին կուև, մին ալալում ա ընգյնում, վըեր աստված թափե, տերն ըղատե։ Կլոխ ա, վըեր հըղվում ա, շորեր ըն, վըեր հըղորտվում ըն, մեյիդ ա, վըեր պարանց ըն քըցում։

Չար կնեգյը կյամ ա սատանին կոշտը, թա տեսնա հինչ չար պան ա ըրալ հըղացումը։

— Հը՞, հունց ը՞ն կործերըտ։

— Վրեչինչ, լավ ա,— սատանան ա ասում,— հըղացեն հուրը շըտըցրալ ըմ, չանն էլ ծակալ ըմ, դանը վըեր ա տեռնում քարեն յըրա ցրեվ կյամ, հալա դան պերողնեն կլխու չըն. լհա վըեր կլխու ընգյնեն կուևնեն ըգյնելու վա հըղցպանեն նհետ։ Մին պատառ կաց, տես էս ա հինչ թկըմհակա ա ինելու։

Վա՜յ, քու տունը շինվի, մին քյինա տես շենումը հի՞նչ կուև ըմ քըցալ, հի՞նչ ալալում կա շենումը, կլոխ ա, վըեր հըղվում ա, մեյիդ ա, վըեր մըեկնվում ա։

Սատանան քյինամ ա շենը, տեսնում հի՞նչ, շենը էրկու թարափի յա պըժենվալ, ուրուր տամ ըն, կտորում։

— Բա հո՞,— ասում ա սատանան,— կնեգյը վըեր բհամ ա եկալ, էն վախտը հալա ըշխարքեն իրեսին սատանան իլած չիլալ։